,Նոր ժամանակի կրթություն ԵԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Աշակերտների քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Ռուզաննա Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ թիվ 132 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն……...3-4
Քննադատական մտածողության սահմանումներ……5-6
Զարգացած քննադատական մտածողության մասին պատկերացումներ……7-8
Աշակերտների քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում …… …...9
Ընթ երցանության դասի անձնական օրինակ……10-12
Քննադատական մտածողությունը խթանելու միջոցներ……..…13-14
Եզրակացություն……..….15-16
Օգտագործված գրականություն……17

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերաիմաստավորելու և ձևափոխելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցներն ստեղծագործաբար կատարելու միջոցով: Հաջորդ ընդհանրությունն այն է, որ քննադատական մտածողությունը խթանում է սովորողների միտքը, նպաստում նրանց մտավոր զարգացմանը, ինչն էլ ժամանակակից մանկավարժության կարևորագույն նպատակներից մեկն է:

Քննադատական մտածողության նպատակներից է աշակերտին դարձնել ուսուցման գործ-ընթացի մասնակից, գիտելիքները պարզ մտապահողի և վերարտադրողի նրա դերը փոխարինել գործուն ուսումնական և որոնողական աշխատանք կատարողի դերով, սովորել սովորեցնել, ի հայտ բերել և ուսուցման ընթացքում զարգացնել նրա ներքին հնարավորությունները, ստեղծագործական մտածողությունը և, որ ոչ պակաս կարևոր է, ձևավորել հասարակության գործուն անդամ, որն ունի հաղորդակցվելու, համագործակցելու, ուրիշի կարծիքը լսելու և գնահատելու, իր տեսակետը հիմնավորելու, ինքնուրույն դիրքորոշում մշակելու, իր որոշումներն արժևորելու և դրանց համար պատասխանատվություն կրելու կարողություններ:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել քննադատական մտածողության զարգացմանն ուղղված աշխատանքների կիրառմամբ կազմակերպվող մայրենիի դասապրոցեսների հաճախականությունը, վերջինիս ճիշտ կազմակերպումը: Պարզել, թե ինչքանով է քննադատական մտածողությունը խթանում աշակերտի ստեղծագործական մտածողության և երևակայական մտքի թռիչքը, բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը:

Հետազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել և ներկայացնել կրթության գործընթացում քննադատական մտածողության կիրառման առանձնահատկություններն աշակերտի բազմաբնույթ մտածողության զարգացման գործում,
- ներկայացնել կրտսեր դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացում աշակերտների քննադատական մտածողության զարգացման առանձնահատկությունները,
- մայրենիի ուսուցման գործընթացում աշակերտների քննադատական մտածողության զարգացմանն ուղղված մեթոդների ու հնարների կիրառման յուրահատկությունները:

Հետազոտության վարկածը: Արտադասարանային ընթերցանության դասաժամերին քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդների կիրառումն օգնում են ընթերցողին գիտակցել և օգտագործել բնագրի առանձնահատկությունները, կարողանալ

հասկանալ, թե կարդացածը որտեղ էր իմաստալից, իսկ որ մասում այն չհասկացվեց, չհասկանալու դեպքում կիրառել մտավոր կարողությունները:

Հետազոտության օբյեկտը: Արդի ժամանակաշրջանում քննադատաբար մտածող մարդու անհրաժեշտության ակներևությունը: Մայրենիի դասերի հիմքի վրա

քննադատական մտածողության կիրառան միջոցով ինքնուրույն մտածելու, քննարկելու, բանավիճելու կարողություններ ունեցող սովորողներ ձևավորելու լայն հնարավորությունների առկայությունը:

Հետազոտության առարկան հանրակրթական դպրոցում սովորող կրտսեր դպրոցի աշակերտն է:

Հետազոտության գիտական նորույթը: Մայրենիի գործող այլընտրանքային դասագրքերում աշակերտների քննադատական մտածողության զարգացանն ուղղված առաջադրանքների համախմբում և ներկայացում մինչև այժմ չի եղել:

Հետազոտության տեսական նշանակությունը: Կատարված տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա արված են տեսական վերլուծություններ, ընդհանրացումներ և հիմնավորումներ ու դրանց հիման վրա կատարվելիք հնարավոր աշխատանքների դասակարգումներ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Աշխատանքը կարող է նպաստել մի կողմից՝ տարրական դասարաններում ուսուցման գործընթացում աշակերտների քննադատական մտածողության զարգացմանն ուղղված մայրենիի դասերն էլ ավելի արդյունավետ և բազմակողմանի դարձնելուն, մյուս կողմից՝ քննադատական մտածողության զարգացմանն ուղղված տարրերն ուսումնական տարաբնույթ աշխատանքներում տեղին և նպատակային գործածելուն:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, 1 ծավալուն գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից:

Աշակերտների քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում

Հասարակական կյանքի տեղաշարժերի ժամանակաշրջանում դպրոցը նույնպես որոշակի փոփոխությունների է ենթարկվում: Աշակերտը գիտելիքներ մտապահողից ու վերարտադրողից, այսինքն՝ ուսուցման օբյեկտից, վերաճում է ուսուցման գործընթացի ակտիվ մասնակցի՝ ուսուցման սուբյեկտի, ինքնուրույն որոշումներ կայացնողի: Վերջինս էլ կյանքի հրամայականն է:

Մանկավարժական գրականության մեջ մի շարք մանկավարժների քննադատական մտածողության շուրջ ձևակերպած սահմանումների հակիրճ ներկայացում:«Քննադատական մտածողությունը» համեմատաբար մանկավարժական նոր մոտեցում է: Ունենալով պատմական հին արմատներ՝ վերջին շրջանում այն ինքնուրույն զարգացում է ապրել և դարձել ժամանակակից առաջատար մանկավարժական տեխնոլոգիա: Բոլորին հայտնի է այս մոտեցման զարգացման հունա-հռոմեական տարբերակները, հատկապես Սոկրատեսի առաջարկած ուսուցման «էվրիստիկ» կամ «սոկրատյան հարցադրումների» մեթոդը: Քվինթիլիանոսն իր զարգացնող ուսուցման մոտեցումը ձևակերպում էր այսպես. «պատանու գլուխը ոչ թե անոթ է, որը պետք է «լցնել» գիտելիքներով, այլ «ջահ» է, որը պետք է վառել»:

Մանկավարժական մտքի հետագա զարգացման ընթացքում այդ մոտեցումն ստացել է տարբեր արտահայտություններ և հիմնականում ընկալվել որպես աշակերտին ուսուցման գործընթացին ավելի գործուն մասնակից դարձնելու ռազմավարության հայեցակարգային հիմք:

Քսաներորդ դարում այս մոտեցումներն ստացան նոր իմաստավորում և ուղղվեցին մասնավորապես աշակերտներին որոնողական գործընթացի մասնակից դարձնելու նպատակի իրականացմանը: Այս մոտեցումը մշակվեց Դալտոն քաղաքում և անվանվեց «դալտոն պլան»: Վերջինիս իմաստն այն է, որ ուսուցիչը պատրաստի գիտելիք հաղորդողից վերածվում էր սովորողի ուսումնական աշխատանքը կազմակերպողի: Աշակերտն ինքնուրույն որոնողական աշխատանքի շնորհիվ ձեռք է բերում անհրաժեշտ գիտելիքներ: Խորհրդային իրականության մեջ այս մոտեցումը տարածում գտավ որպես բրիգադ-լաբորատորային մեթոդ, որը ենթադրում էր նաև թիմային աշխատանքի կատարում: Այսինքն՝ սովորողներն ուսուցչի ղեկավարությամբ համատեղ աշխատանքի արդյունքում էին ձեռք բերում անհրաժեշտ գիտելիքները:

Այս մոտեցումների հետագա զարգացումը տարբեր մանկավարժական դպրոցներում ընթանում էր տարբեր ուղղություններով: Սակայն միշտ ամփոփոխ էր մնում հիմնական գաղափարը, այն է՝

աշակերտին դարձնել ուսուցման գործընթացի մասնակից, գիտելիքների պարզ մտապահողի և վերարտադրողի նրա դերը փոխարինել գործուն ուսումնական և որոնողական աշխատանք կատարողի դերով, սովորել սովորեցնել, ի հայտ բերել և ուսուցման ընթացքում զարգացնել նրա ներքին հնարավորությունները, ստեղծագործական մտածողությունը և, որ ոչ պակաս կարևոր է, ձևավորել հասարակության գործուն անդամ, որն ունի հաղորդակցվելու, համագործակցելու, ուրիշի կարծիքը լսելու և գնահատելու, իր տեսակետը հիմնավորելու, ինքնուրույն դիրքորոշում մշակելու, իր որոշումներն արժևորելու և դրանց համար պատասխանատվություն կրելու կարողություններ:

Այս նպատակներին հասնելու տեխնոլոգիաներից մեկն է քննադատական մտածողությունը: Վերջինիս մի շարք սահմանումներ գոյություն ունեն: **Քննադատական մտածողությունն ըստ Արթուր Ռոբերի՝ ճանաչողական (կոգնիտիվ-իմացական) ուսուցման ռազմավարություն է՝ մեծ մասամբ ուղղված որոշակի աշխատանքի իրականացման, խնդրի հնարավոր լուծումների անընդհատ լուծումների և փորձարկումների:** Այս ձևակերպմամբ քննադատական մտածողությունը չի նույնացվում ստեղծագործական մտածողության հետ: Ըստ հեղինակի տարբերությունն այն է, որ «ստեղծագործական մտածողությունը հանգեցնում է նոր բացահայտումների և լուծումների, այն դեպքում, երբ քննադատական մտածողությունը գոյություն ունեցող գաղափարների և լուծումների առումով ունի թերությունների կամ սխալների ստուգման գործառույթ »:

Ե.Ն.Վոլկովը քննադատական մտածողությունն սահմանում է.

- այն կոգնիտիվ ռազմավարության օգտագործումն է, որը բարձրացնում է ցանկալի վերջնական արդյունքի ստացման հավանականությունը,
- նոր, իմաստավորված հարցեր առաջադրելու, տարաբնույթ ու հաստատուն հարցեր մշակելու և կանխորոշված վճիռներ կայացնելու ունակությունն է,
- քննադատական մտածողությամբ օժտվածները կարող են կազմակերպված և շատ լավ բացատրել իրենց և կամ այն տեսակետերը, որոնց հետ համաձայն չեն,
- դա մտածողության այնպիսի տիպ է, որը մարդուն օգնում է որոշել սեփական գերակայություններն անձնական, մասնագիտական ու հասարակական կյանքում, ինչպես նաև դրանք համեմատել արդիական չափանիշների հետ,
- ենթադրում է կատարված ընտրության համար անհատական պատասխանատվության ստանձնում,
- բարդ գործընթաց է, որը հնարավորություն է տալիս համատեղ գործունեության մեջ զարգացնել երկխոսության կուլտուրա,
- բարձրացնում է տեղեկատվության հետ անհատական աշխատանքի կուլտուրայի

մակարդակը, ձևավորում վերլուծելու և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, սեփական որոշումների հետևանքները կանխատեսելու և դրանց համար պատասխանատվություն կրելու կարողություն:

- Ճանաչողական ակտիվ և փոխներգործուն ընթացք է:

Որոշ տարբերություններով հանդերձ՝ այս մոտեցումներն ունեն նաև մի շարք ընդհանրություններ: Այդ թվում ընդհանուր է այն, որ «քննադատական մտածողություն» հասկացությունը և դրանից բխող մոտեցումները պետք է հավասարապես մատչելի լինեն բոլորին՝ և՛ կրտսեր դպրոցի ուսուցիչներին, և՛ համալսարանական դասախոսներին:

Հաջորդ ընդհանրությունն այն է, որ քննադատական մտածողությունը խթանում է սովորողների միտքը, նպաստում նրանց մտավոր զարգացմանը, ինչն էլ ժամանակակից մանկավարժության կարևորագույն նպատակներից մեկն է:

Զարգացած քննադատական մտածողության կարողությունների մասին ժամանակակից պատկերացումներն են.

- ✓ նոր մտքերի յուրացմանը պատրաստ լինելը
- ✓ սեփական դատողություններում սխալներից խուսափելու ձգտումը
- ✓ իրադարձային և տրամաբանական մտածողությունների տարբերության գիտակցումը
- ✓ օբյեկտիվ բովանդակության տարբերակումը սուբյեկտիվից
- ✓ հնարավոր ճշտի և սխալի միջև տարբերության ընկալումը
- ✓ սեփական անընկալության գիտակցումը:

Կյանքի կողմից թելադրվող բավականին բարդ նպատակների իրականացմանն են ուղղված ժամանակակից տեսական և գործնական մանկավարժության որոնումները, որոնք անվանում են նորարարական մանկավարժություն:

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը պահանջներ է ներկայացնում ուսուցչին: Նա պետք է դառնա ոչ թե ուսումնական գործընթացի թելադրողը, այլ լինի ուղղորդողի, օգնականի, խթանողի, մասնակցի դերում և հնարավորություն ընձեռի խորհելու և անկաշկանդ ինքնարտահայտվելու:

Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ աշակերտները ոչ թե պետք է մտապահեն պատրաստի ստացած գիտելիքները, այլ եռանդուն կերպով մասնակցեն գիտելիքների ձեռք բերման գործընթացին, դառնան հայտնագործողներ, նորը ստեղծողներ: Այդ դեպքում ոչ միայն կրթական բարդ խնդիրներ են լուծվում, այլև ուսման գործընթացը դառնում է բովանդակալից, հետաքրքիր ու առավել արդյունավետ:

Դպրոց մուտք գործող նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների թվին է պատկանում քննադատական մտածողության զարգացման տեսությունը:

«Քննադատական մտածողություն» եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է «քննադատել» բառին: Սակայն այս բառը ներառում է «քննել» և «դատել» բառ-հասկացությունները: Այսինքն՝ իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:

Բոլորի կողմից ընդունված սահմանում է. քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ:

Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերամիմաստավորելու և ձևափոխելու բարդ գործընթաց, որը կատարվում է գաղափարներն ու միջոցներն ստեղծագործաբար կատարելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում: Սա բավականին սխալ պատկերացում է: Կրտսեր դպրոցի երեխաները ևս պատրաստակամորեն են մասնակցում բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Չէ՞ որ գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կարողանում են տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը:

Երեխայի հաջողակ մուտքը տեղեկատվական աշխարհ կախված է երեխայի ստեղծագործական կարողության զարգացումից, նրանց սիմվոլային տեղեկատվության ընկալումից: Իսկ դա իր հերթին որոշվում է մտածողության զարգացումով, երևակայության, խոսքով իրեն դրսևորելու անկաշկանդ և քաղաքավարի շփումով: Սիմվոլիկ ինֆորմացիան գաղտնագրում է կյանքի տարբեր ոլորտներում, ինչպես նաև արվեստում: Բայց ամենից շատ այն գաղտնագրված է լեզվում: Որպեսզի մարդն արդի հասարակությունում պահանջարկ ունեցող և ճանաչված լինի, նրան պետք է մանկուց սովորեցնել մտածել, կարողանալ խոսքով արտահայտել սեփական մտքերը, համաձայնել կամ հերքել, երևակայել: Այլ կերպ ասած երեխային պետք է պատրաստել նրան, որ կարողանա արձագանքել աշխարհի բազմազանությանը:

Այս բոլոր կամային որակները երեխաները ձեռք են բերում ընթերցանության միջոցով: Կերպարները, որոնք հիշեցնում են տեքստը, տալիս են ազդակ ստեղծելու սեփական կերպարը, մտքերը: Շատ կարևոր է, որ երեխան ընթերցելիս հասկանա, թե ինչ իմաստ է թաքնված բառերի տակ, հերոսների վարքագծով, շարժումով, հայացքով կարողանա հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում յուրաքանչյուր հերոս:

Քննադատական մտածողությունն ինքնուրույն մտածողություն է: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները:

Դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ լիովին համոզվել ենք, որ մեր փոքրահասակ սաներն էլ կարող են քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ: Նրանք դառնում են ակտիվ սովորող, մտածող անհատներ:

Ի վերջո, արդյունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է.

- զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են
- ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին

- պատրաստ լինեն և՛ ձևափոխել, և հարկ եղած դեպքում նաև՝ կասեցնել սեփական դատողությունները:

Յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների ուսուցումը չի կարող երբեք իր մեջ ընդգրկել այն ուսումնական առարկայից: Ծրագրում տրվածը միայն այն հիմնականն է, որ անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար, իսկ մնացածը երեխաներն իրենք պետք է ինքնուրույն կերպով ստանան շրջապատից կամ գրքերից:

Այսինքն՝ յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է սովորել սովորեցնելը:

Ասվածի վառ օրինակ է արտադասարանային ընթերցանության պարապմունքի կազմակերպումը: Առաջին դասարանի երկրորդ կիսամյակում աշակերտներն աստիճանաբար սովորում են առանց ուսուցչի օգնության կարդալ անծանոթ գիրքը, գտնել վերնագիրը, հեղինակի անունը և դրանց հիման վրա որոշել գրքի թեման:

Աշակերտների քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում: Արտադասարանային ընթերցանությունը կազմակերպելիս անպայման պետք է նկատառել.

- սովորողների պատրաստվածության մակարդակը
- ծնողների սոցիալական վիճակը, դասարանի և դպրոցի գրադարանի փաստացի ֆոնդը:

Այս բոլոր փաստերի հաշվառմամբ արտադասարանային ընթերցանության գրքերի և առանձին ստեղծագործությունների ընտրությունը պետք է կատարվի հետևյալ պայմանների առկայությամբ.

- բնագիրը պետք է լինի ծավալով փոքր՝ պարզ, մատչելի, թեման՝ հոգեհարազատ, գաղափարը՝ հասկանալի,
- արտադասարանային ընթերցանության համար ընտրված գրքերը գեղարվեստական ձևավորմամբ պետք է լինեն այնպիսին, որ երեխաները հետաքրքրվեն նկարազարդումներով, հրճվեն հերոսների նկարներով:

Արտադասարանային ընթերցանություն կազմակերպելիս պետք է հաշվի առնել արդի դարաշրջանում մշտապես հնչող հետևյալ պահանջը. կրտսեր դպրոցականների մեջ սերմանել ընթերցանություն, զարգացնել գեղարվեստական ստեղծագործության գաղափարը հասկանալու, եզրահանգումներ, ընդհանրացումներ կատարելու կարողություններ:

Իսկ ինչպե՞ս, ի՞նչ հնարներով: Անհրաժեշտ է կրտսեր դպրոցականների մեջ ձևավորել սեր և ընթերցանության նկատմամբ այնպիսի վերաբերմունք, որը նպաստի նրանց մեջ անձնային բարձրարժեք որակների զարգացմանը, գրագետ ընթերցողի կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը:

Հաճախ են լինում աշակերտներ, որոնք հենց նոր են կարդացել ու շատ քիչ բան են հասկացել: Վատ ընկալունակությունը հաճախ բացատրվում է շատ պարզ պատճառով՝ վատ ընկալողները պարզապես ուշադիր չեն կարդում: Նրանք չգիտեն, թե ինչպես կարդան, որ կենտրոնանան

հիմնական մտքերի վրա: Ուսուցիչները, տիրապետելով քննադատական մըտածողության հնարներին, կարող են օգնել աշակերտներին ՝ խորհել կարդացածի շուրջ:

Դրանով է բարձրանում նրանց ընթերցողական ընկալունակությունը: Ընթերցանությունն ակտիվ գործընթաց է, որն ընթերցողին ստիպում է մտածել ընթերցվող նյութի շուրջ և ակտիվորեն կառուցել իմաստը: Եթե ընթերցողը չի մտածում այն գաղափարների մասին, որոնք արտահայտվում են ընթերցվող բնագրում, ապա իսկական ընթերցանություն տեղի չի ունենա: Ընթերցողը պետք է գիտակցաբար ջանքեր գործադրի կարդացածը հասկանալու համար, այլապես իսկական ընթերցանություն, ընկալում տեղի չի ունենա: Արտադասարանային ընթերցանության պարապմունքներին քննադատական ընթերցանության զարգացմանը նպաստող մեթոդների ու հնարների կիրառումն օգնում է, որ ընթերցողը.

- օգտագործելով որոշակի ռազմավարություններ՝ կառուցի իմաստներ, որոնք կօգնեն իրենց ընթերցանության ընթացքում կառուցել կարդացածի սեփական ընկալումը
- գիտակցի և օգտագործի բնագրի առանձնահատկությունները, որոնք կօգնեն հասկանալ բնագրի իմաստը
- վերահսկի իր ընկալման ընթացքը և հասկանա, թե որտեղ է կարդացածն իմաստալից, իսկ որ մասում այն չհասկացվեց
- չհասկանալու դեպքում փորձի գործադրել սեփական մտավոր կարողությունները:

Ներկայացնում եմ քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդների և հնարների կիրառմամբ արտադասարանային ընթերցանության դասերի անցկացման անձնական փորձս երրորդ դասարանում:

Դեռևս ամառային արձակուրդներին աշակերտներին հանձնարարել եմ ընթերցել իրենց նախընտրած ստեղծագործությունները: Ասեմ նաև, որ նախապես ծնողներին խնդրել եմ երեխաներին օգնել գրականության ընտրության հարցում: Ընտրել այնպիսի մանկական գրականություն, որն աչքի ընկնի պարզությամբ, մատչելիությամբ, խոր գեղարվեստականությամբ և կերպարների ու նկարագրված դեպքերի վառ գունավորմամբ: Նման ստեղծագործությունները երեխաների մեջ հույզեր ու ապրումներ են առաջացնում: Նրանք կզգան ու հոգեպես կվերապրեն այն ամենը, ինչ նկարագրված է գրքում: Երբ աշակերտներին թույլ է տրվում ընտրել ինչ կարդալ. նրանք սկսում են կարդացածի հանդեպ սեփականություն ունենալ: Դա առաջին վճռորոշ այն քայլն է, որն ընթերցողին դարձնում է ներգրավված:

Ուսումնական տարվա սկզբին արտադասարանային ընթերցանությանը հատկացված հենց առաջին դասաժամին, որն անվանում ենք խորհրդակցության ժամ. յուրաքանչյուրը ներկայացրեց իր կարդացած ստեղծագործությունը գովազդի տեսքով՝ առանց բովանդակությունը պատմելու: Տրամաբանական է այն փաստը, որ յուրաքանչյուր աշակերտ ձգտում է առավելագույնս գեղեցիկ ձևով ներկայացնել գովազդը, որպեսզի իր ընկերների ընտրությունը կանգ առնի հենց իր նախընտրած ստեղծագործության վրա, և բոլորն ընթերցեն այն: Ներկայացնողներին ուղղեցի հարցեր.

- ինչո՞ւ է ընտրել հատկապես այդ պատմվածքը,
- ինչպե՞ս է այն կարդացվում,
- դու ծանո՞թ ես այդ հեղինակի որևէ այլ ստեղծագործության,
- անծանոթ բառեր կայի՞ն, ինչպե՞ս իմացար դրանց բացատրությունը:

Ներկայացողն իր ընթերցած ստեղծագործությունը փոխանցեց ընկերներին, որպեսզի վերջիններս շոշափեն այն, թերթեն, դիտեն կազմը, նկարազարդումները և այլն:

Այնուհետև քննարկեցինք և ըստ քվեարկության արդյունքների ընտրեցինք որևէ մեկի կարդացած և ստեղծագործությունը և որոշեցինք ընթերցել այն: Միասին սահմանեցինք այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է աշակերտներին ստեղծագործությունն ընթերցելու համար: Հաշվի առանք նաև տվյալ ստեղծագործությունն ընթերցած աշակերտի կարծիքը: Աշակերտներն անպայման պետք է իմանան ընթերցանությանը հատկացվող ժամանակը, որպեսզի ըստ այդմ կարողանան պլաններ կազմել: Հիշեցրեցի նաև, որ ընթերցելուց հետո պետք է համագործակցային խմբում մասնակցեն քննարկմանը: Նման բնույթի հանձնարարությունն օգնում է աշակերտներին՝ ընթերցման ժամանակ ուշադրություն դարձնել այնպիսի մանրամասների վրա, որ նախկինում չէին նկատել:

Այսինքն՝ եթե ընթերցողն իր առջև որոշակի նպատակ կամ խնդիր է դնում նախքան կարդալը, ապա նա ընթերցման ժամանակ վերահսկում է իր սեփական ընկալումը: Եթե գիտակցում է, որ ինչ-ինչ իրադարձությունների իմաստը լավ չհասկացավ, կամ կորցրեց պատմվածքի «թելը», ձեռնարկում է ճշգրտման քայլեր՝ վերընթերցում է, չհասկացած հատվածն արագ վերանայում, բառի իմաստը փնտրում բառարանում և այլն:

Մինչ կարդալն սկսելը մտագրոհի միջոցով կազմում ենք բնագրի իմաստի կանխավարկածը: Եթե ընթերցողը նախօրոք գիտի, որ ինքը պատմվածք է կարդալու, ապա մինչ բուն ընթերցանությունն սկսելը փորձում է վերնագիրն ու նկարներն օգտագործել որպես բանալի պատմվածքի բովանդակությունը կռահելու համար: Այս դեպքում նա կանգնած է լավ ընկալման շեմին:

Տրված ժամանակը լրանալուց հետո սկսեցինք քննարկման դասաժամը:

Աշակերտները խմբերի բաժանման եղանակով բաժանվեցին վեց համագործակցային խմբի: Նրանց ուղղվեցին որոշակի հարցեր, որոնց պատասխանները պետք է քննարկեին: Այսպես.

- ի՞նչը ձեզ դուր եկավ այս պատմվածքում
- ի՞նչը ձեզ դուր չեկավ
- ինչպե՞ս էր պատմվածքն սկսվում
- ինչպե՞ս ավարտվեց
- արդյո՞ք ընդունելի ավարտ էր
- ի՞նչն էր կարևոր
- պատմվածքն ընթերցելուց հետո ի՞նչ մտքեր են ծագել ձեր գլխում
- ի՞նչն այլ կերպ կանեիք, եթե կերպարներից մեկը լինեիք

- ի՞նչ սովորեցիք հերոսներից
- ո՞ր կերպարն ամենաշատը ձեզ դուր եկավ
- ի՞նչ հասկացաք՝ կարդալով այս պատմվածքը
- կարո՞ղ եք այլ ավարտ մտածել և հորինել
- ինչպիսի՞ն էր տրամադրությունը
- ինչ կարևոր իրադրություն եք վերհիշել
- ո՞րն է ձեր սիրելի հատվածը
- այս պատմվածքը ձեզ որևէ դեպք կամ որևէ բան հիշեցնո՞ւմ է
- ձեր կարծիքով ինչո՞ւ է հեղինակը գրել այս պատմվածքը:

Այնուհետև խմբերն իրենց ցանկությամբ վահանակ կամ թղթապանակ պատրաստեցին այս պատմվածքի վերաբերյալ: Խմբի անդամների միջև կատարեցինք աշխատանքի բաժանում՝ ընտրելով հետևյալ խորագրերը:

- Պատմվածքի քարտեզ
- Հեղինակի մասին
- Պատմվածքի «մանրակերտը»
- Մեր տպավորությունը
- Գլխավոր հերոսի բնութագիրը
- Նամակ հերոսին
- Հերոսի կողմից նամակ
- Պատմվածքի տարբեր հատվածների նկարազարդում

Ավագները (խոսնակները) ներկայացրեցին իրենց խմբերի աշխատանքները: Դրանք փակցրեցինք երևացող հատվածում, որպեսզի մյուս դասարանների աշակերտները տեսնեն և իրենք էլ հետաքրքրվեն այդ պատմվածքով և իրենք էլ այն ընթերցելու ցանկություն հայտնեն:

Երբ նույն պատմվածքն ընթերցում են բոլորը և քննարկում, ապա այդպիսի ընթերցանությունը կարող է միավորել աշակերտներին և նրանց մեջ զարգացնել համագործակցային և հաղորդակցական հմտություններ:

Կարծում եմ, որ արտադասարանային ընթերցանության այս ձևով կազմակերպումը նըպաստավոր պայմաններ է ստեղծում, որպեսզի աշակերտների մեջ արթնանա ընթերցանության հանդեպ սեր, նրանք գնահատեն իրենց ընթերցածը, կարողանան ընթերցանության միջոցով ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ և վերահսկեն իրենց ընթերցածը:

Աշակերտներին ընթերցասեր դարձնելու համար անհրաժեշտ է լուրջ ակնկալիքներ ունենալ յուրաքանչյուրից:

Քննադատական մտածողությունը խթանելու կամ, ընդհակառակը, այն արգելակելու ամենաազդեցիկ միջոցներից են ուսուցչի հարցադրումները: Բազմաթիվ մասնագետներ կարծում են, որ ուսուցչի հարցերը կարող են սահմանափակել աշակերտի մտածողությունը: Հնարավոր է, որ դրանք պահանջեն միայն նյութի պարզ մտապահում և վերարտադրում կամ աշակերտին մղեն

խորհելու, կշռադատելու, վերակառուցելու, երևակայելու, ստեղծագործելու և ուշադիր ծանրութեթև անելու:

Հարցադրումները պետք է խթանեն աշակերտների մտավոր աշխատանքը, օգնեն հասկանալու, որ իրենց մտածելը կարևոր է, և իրենք էլ կարող են ունենալ արժեքավոր մտքեր:

Առաջարկվող բազմապիսի հարցերի շնորհիվ աշակերտները կարող են հասկանալ, որ գիտելիքը քարացած չէ, և գաղափարներն առաձգական ու փոփոխական են:

Այդ տեսակետից ուսուցիչները կարող են հզոր ու ազդեցիկ օրինակներ հանդիսանալ: Դպրոցական ամենավաղ տարիքից երեխաներն ուշի-ուշով հետևում են ոչ միայն իրենց ուսուցչի ասածին, այլև նրա արածին: Այսպիսով, ուսուցչի օգնությամբ և նրա օրինակին հետեվելով՝ աշակերտները ձեռք են բերում սովորելու, գիտելիքները կիրառելու, իմացածը համակարգելու և համապատասխան եզրահանգումներ անելու կարողություններ:

Հայտնի է, որ խոսքը/ լեզուն և մտածողությունը գտնվում են անմիջական կապի մեջ: Կաշկանդված խոսքի արդյունք է կաշկանդված, սահմանափակ միտքը: Ուստի, ճիշտ կազմակերպված հարցադրումներն անմիջականորեն կապված են ոչ միայն աշակերտների խոսքի, այլև մտքի զարգացման հետ: Փաստերին վերաբերող հարցերի պատասխաններն իմացող և դրանք մտապահող աշակերտները հաճախ ըստ էության չեն յուրացնում դրանց բուն իմաստները և դժվարանում են իրենց մտապահած գիտելիքների օգտագործմամբ տրամաբանական եզրահանգումներ կատարել:

Նոր տեղեկատվությունը կշռադատելու և նախկին գիտելիքների ու պատկերացումների հետ այն համադրելու համար աշակերտները պետք է ներգրավվեն իմաստավորված քննարկումների մեջ: Սովորողները կարող են իրենց մտքերն արտահայտել սեփական բառապաշարով և յուրացնել ցանկացած նոր բառապաշար: Նոր գիտելիքը նոր բառապաշարի միջոցով ըմբռնելու, յուրացնելու, իմաստավորելու և կշռադատելու շնորհիվ է, որ նրանք սովորում են սովորել և այն վերածել ողջ կյանքում շարունակվող գործընթացի:

Քննադատական մտածողությունն օգտագործվում է որոշումների կայացման, ձևավորման, գնահատման և կանխորոշման, կարծիքների արտահայտման և արժևորման, քննարկումների՝ երկխոսությունների և վիճաբանությունների անցկացման ու կոնֆլիկտների լուծման ժամանակ: Այսպիսով՝ քննադատաբար մտածող մարդը գտնում է խնդրի սեփական լուծումները և կարողանում դրանք հիմնավորել տրամաբանությամբ և փաստարկներով: Միաժամանակ եզրահանգողը գիտակցում է, որ հնարավոր է նաև նույն խնդրի այլ լուծումներ:Եթե առկա է այդպիսի իրավիճակ, ապա նա պետք է կարողանա հիմնավորել և ապացուցել լուծման իր տարբերակի առավելություններն ու նպատակահարմարությունը:

Եզրակացություն

Ուսումնասիրելով «Աշակերտների քննադատական մտածողության զարգացումը մայրենիի ուսուցման գործընթացում» թեման՝ համոզվեցի, որ չնայած քննադատական մտածողության մանկավարժության մեջ համեմատաբար նոր մոտեցում լինելուն, այնուամենայնիվ դա չի խանգարում ուսուցման գործընթացում բարձր արդյունավետություն ապահովելուն:

Քննադատական մտածողության հիմքում ամփոփոխ է մնում հիմնական գաղափարը, այն է՝ աշակերտին դարձնել ուսուցման գործընթացի մասնակից, գիտելիքների պարզ մտապահողի և վերարտադրողի նրա դերը փոխարինել գործուն ուսումնական և որոնողական աշխատանք կատարողի դերով, սովորել սովորեցնել, ի հայտ բերել և ուսուցման գործընթացում զարգացնել նրա ներքին հնարավորությունները, ստեղծագործական մտածողությունը և, որ ոչ պակաս կարևոր է, ձևավորել հասարակության գործուն անդամ, որն ունի հաղորդակցվելու, համագործակցելու, ուրիշի կարծիքը լսելու և գնահատելու, իր տեսակետը հիմնավորելու կարողություններ:

Քննադատաբար մտածող մարդը գտնում է խնդրի սեփական լուծումները և կարողանում դրանք հիմնավորել տրամաբանությամբ և փաստարկներով: Միաժամանակ եզրահանգողը գիտակցում է, որ հնարավոր է նաև նույն խնդրի այլ լուծումներ:Եթե առկա է այդպիսի իրավիճակ, ապա նա պետք է կարողանա հիմնավորել և ապացուցել լուծման իր տարբերակի ա-ռավելություններն ու նպատակահարմարությունը:

Քննադատական մտածողության բնորոշ գծերն են՝ հիմնավորվածությունը, գնահատողա-կանությունը և արդյունավետությունը: Հիշյալ հատկանիշները հնարավորություն են տալիս տարբերել քննադատական մտածողությունը ստեղծագործականից:

Քննադատական մտածողությունն ինքնուրույն մտածողություն է: Ինքնուրույնությունը քննա-դատական մտածողության առաջին և, հավանաբար, ամենակարևոր բնութագիրն է:

Քննադատաբար մտածելու համար սովորողը, մարդը պետք է ունենա գիտելիքների մեծ պաշար: Գիտելիքը (տեղեկատվությունը) ոչ թե քննադատական մտածողության արդյունք է, այլ դրա խթանը կամ առաջին քայլը: Գիտելիքներն այն հիմքերն են, առանց որոնց մարդ չի կարող քննադատորեն մտածել:

Ես, քննադատական մտածողության առավելությունն ու արդյունավետությունը նկատի ունենալով, հաճախ եմ աշակերտներիս մղում քննադատաբար մտածելու: Վերջինս զարգացնում է սովորողների.

- խմբերում աշխատելու կարողությունները,
- հավասար պայմաններում համագործակցելու, միևնույն ժամանակ ղեկավարելու և դրա համար անհրաժեշտ կարողություններն ու հմտությունները,
- անձնական նախաձեռնություն ցուցաբերելու ունակություններ,
- սեփական սկզբունքները պահպանելու հակումները,
- գիտելիքը ստեղծագործաբար իմաստավորելու, ըստ նորության և կարևորության տեղեկատվությունը համակարգելու հմտությունը:

Վերոհիշյալ թեմայի ուսումնասիրությունը նպաստեց պրպտումների և որոնումների ճանապարհին նոր համոզմունքներ ձևավորելուն: Մանրամասն ծանոթացա քննադատական մտածողության մեթոդներին, դասի տարբեր փուլերում դրանց արդյունավետ և ճիշտ օգտագործման ձևերին:

Վստահորեն կարող եմ ասել, որ կատարածս աշխատանքը մղեց նորից ու նորից մտածել, թե ինչպես, ինչ հնարների կիրառմամբ կարելի և հնարավոր է ձևավորել քննադատական մտածողություն ունեցող սովորող: Բոլորիս համար էլ պարզ է, որ մեր հասարակությունն այսօր կարիք ունի ստեղծագործաբար մտածող, տեղեկատվությունը վերաիմաստավորող, իր մտքերն ու կարծիքներն արտահայտող քաղաքացու:

Օգտագործված գրականություն

1. Կարինե Թորոսյան, Վ. Սարգսյան և ուրիշներ, Մայրենի ուսուցչի ձեռնարկ (2-4), -Եր., «Զանգակ-97», 2011:
2. Մելանյա Աստվածատրյան և ուրիշներ, Բազմաբնույթ ուսուցման տեսության կիրառումն ուսուցման վաղ շրջանում (ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցչի համար), «Ոսկան Երևանցի», 2004, 290 էջ:
3. Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, գործիմաց մոտեցում տեսություն և պրակտիկա (ձեռնարկ ուսուցիչների պատրաստման համար), «Նոյան Տապան», «Այռեքս» 2004:
4. Սթիլ Ջ.Լ., Մերեդիտ Ք.Ս., Թեմփլ Չ., «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի ուղեցույցներ (1-8), Երևան, 1998:
5. Գիտամեթոդական հանդես «Նախաշավիղ», /2001/2:
6. Համացանց: